ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծնվել է 1990 թվականի մարտի 24-ին, Վանաձոր քաղաքում:

Կրթություն

2007-2011թթ-ին սովորել է Հայաստանում Ֆրանսիական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում:

2011-2013 թթ-ին սովորել է Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնում՝ Ժողովրդավարություն և Մարդու իրավունքներ ԵՄ մագիստրոսական ծրագրի շրջանակներում: 2012թվականին սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին ծրագրի շրջանակներում ուսուցանել է Կիևի Տառաս Շեւչենկոյի անվան համալսարանում:

2017 թվականից մինչ օրս հանդիսանում է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի հայցորդ:

Աշխատանքային փորձ

2012 թվականից մինչ օրս աշխատում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունում՝ ներգրավված լինելով դատական համակարգի և իրավապահ մարմինների ուսումնասիրության ու մշտադիտարկման աշխատանքներում: Աշխատանքի մեջ կենտրոնական դեր զբաղեցրել է դատավորների ընտրության և նշանակման, կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի ուսումնասիրությունները, "Դատական օրենսգիրք" սահմանադրական օրենքի փոփոխությունների նախագծերի վերաբերյալ կարծիք հայտնելը:

2013 թվականից մինչ 2020 թվականը հանդիսացել է ՀՀ ԱՆ Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հսկողություն իրականացնող դիտորդական խմբի անդամ-փորձագետ: 2018-2020թթ-ին եղել է նույն խմբի նախագահը:

2014-2015թթ-ին հանդիսացել է Եվրոպայի Խորհրդի Երևանյան գրասենյակի տեղական փորձագետ և խտրականության հարցերով դասընթացավար:

2015-2017թթ-ին աշխատել է որպես փորձագետ և դասընթացավար «Նոր սերունդ մարդասիրական» ՀԿ-ում:

2016 թվականի մարտ-մայիս ամիսներին հանդիսացել է Եվրոպայի Խորհրդի փորձագետ՝ «Արևելյան գործընկերության երկրներում քաղաքացիական հասարակության մասնակցությունը քաղաքական որոշումների կայացմանը» ծրագրի շրջանակներում:

2016 թվականին աշխատել է «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ում որպես իրավաբան՝ ներկայացնելով 2016 թվականի քառօրյա պատերազմի զոհերի իրավունքները Եվրոպական դատարանում ընդդեմ Ադրբեջանի:

2016-2017թթ-ին աշխատել է ՀՀ Փաստաբանների դպրոցում դասավանդելով «Խտրականության արգելք» առարկան:

2015-2018թթ-ին ՀՀ Փաստաբանների դպրոցում դասավանդել է «ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու պրակտիկ հմտություններ» առարկան:

2018 թվականից մինչ օրս հանդիսանում է Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրության կենտրոնի դասախոս:

2019 թվականի ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ Արդարադատության ակադեմիայում դասավանդել է «Խտրականության արգելք» առարկան:

2020 թվականի փետրվար-հոկտեմբեր ամիսներին հանդիսացել է Եվրոպական Հանձնաժողովի մարդու իրավունքների փորձագետ:

2020 թվականի օգոստոս ամսին Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրվել է Ուսումնական հարցերով հանձնաժողովի անդամ:

2022 թվականի մայիս ամսից մինչ հոկտեմբեր ամիսը հանդիսացել է Համաշխարհային Բանկ կազմակերպության տեղական փորձագետ՝ ներգրավված լինելով դատական իշխանության ոլորտին առնչվող ուսումնասիրություններում:

2023 թվականի հունվար- մարտ ամիսներին հանդիսացել է USAID կազմակերպության տեղական փորձագետ:

2023 թվականի մարտից հոկտեմբեր, ինչպես նաև 2024 թվականի սեպտեմբերից դեկտեմբեր ամիսներին հանդիսացել է Արևելյան Գործընկերության Քաղաքացիական

հասարակության ֆորումի Դատական իշխանության ոլորտի փորձագետ՝ իրականացնելով արևելյան գործընկերության 6 երկրների դատական համակարգերի ուսումնասիրություն:

2024 թվականի մայիս- օգոստոս ամիսներին կրկին աշխատել է USAID-Հայաստան կազմակերպության հետ՝ որպես տեղական փորձագետ:

2024 թվականի նոյեմբեր ամսից մինչ 2025 թվականի մարտը հանդիսացել է USAID-Հայաստան Աջակցություն դատահիրավական ոլորտ բարեփոխումներին ծրագրի ավագ խորհրդատու:

2025 թվականի սեպտեմբեր ամսից դասավանդում է ՀՀ ՆԳՆ Ոստիկանության Ակադեմիայում:

Հրապարակումներ

- «Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերն ու գործառնական նշանակությունը», 2022, հասանելի է «Արդարադատություն» գիտական հանդեսում
- «Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը ՀՀ-ում դատական իշխանության անկախության հաստատման վրա», հետազոտություն, Հասմիկ Հարությունյան, 2018թ, հասանելի է հետևյալ հղումով՝ https://prwb.am/2019/01/25/%D5%B0%D5%A5%D5%BF%D5%A1%D5%A6%D5%B8%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D6%87-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A2/
- «Դատական խորհուրդների ձեւավորման, գործառույթների ու կազմի պահանջները: Բարձրագույն դատական խորհուրդը որպես ՀՀ-ում դատարանների ու դատավորների անկախության երաշխավոր»,

2018, հասանելի է Գիտական հոդվածների ժողովածու հանդեսում, Եվրոպական համալսարան

- «ՀՀ-ում դատարանների անկախության սահմանադրական երաշխիքները միջազգային չափանիշների լույսի ներքո», 2018, հասանելի է «Արդարադատություն» գիտական հանդեսում

- «ԽԿԿ զեկույցների ու հանձնարարականների դերը: բարոյական, թե իրավական ազդեցություն», հասնաելի է Միջազգային համեմատական իրավունքի տարեգրքում, 2016

- «Անգործունակություն: այլընտրանքի բացակայություն, թե մտավոր խնդիրներ ունեցող անձանց մեկուսացում», հասանելի է www.prwb.am կայքում, 2015

- «Մեթադոնային բուժման դերը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում», հասանելի է www.prwb.am կայքում, *2014*

- «ՀՀ-ում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտի առանձնահատկությունները», www.prwb.am կայքում, 2014

- «*Ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման ինստիտուտը ՀՀ-ում*", www.prwb.am կայքում, 2014

- «Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի պրակտիկան ՀՀ զինված ուժերում:, Լավագույն մագիստրոսական թեզերի շնորհանդես, 2011-2013, Մարդու իրավունքներ և ժողովրդավարեցում Երևելյան Գործընկերության տարածաշրջանում, 2013

- «Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը ՀՀ-ում: Կրթության դերը անցումային փուլում», գիտական հոդված, ԵՄ տարեգիրք, 2011-2012

- «Համընդհանուր պարբերական դիտարկումը որպես մարդու իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմ: արդյունավետությունը Հայաստանում: գիտական հոդված,

Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն, «ԵՎՐՈՊՈԼԻՍ» գիտական հանդես, 2012

Այլ տեղեկություններ

- 2016 թվականին ԱՄՆ պետդեպարտամենտի «Միջազգային այցելու» ծրագրի մասնակից
- 2018-2019թթ Բաց հասարակության հիմնադրամներ ՀՀ կրթաթոշակառու՝ «Դատական և իրավական բարեփոխումների ծրագրերի ազդեցությունը դատական իշխանության անկախության վրա» ծրագրի շրջանակներում
- 2019-2023թթ դատական և իրավական բարեփոխումների ծրագրի համակարգող խորհրդի անդամ
- 2022-2026թթ Դատական և իրավական բարեփոխումների ծրագրի համակարգող խորհրդի անդամ
- Եվրոմիություն- Հայաստան քաղհասարակության պլատֆորմի անդամ, 2024թ